**Արձանագրություն N 2-3**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/17 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում մարզական համալիրի կառուցման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

02.07.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ Լ. Մելիքյան
Գ. Գևորգյան
Ս. Նունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Կ. Հարությունյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման գնահատման մասին**

--------------------------------------------------------------------------------

(Ա. Զոհրաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակից «Սեյսմշին» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 30.06.2026թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրա կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

**2. Տվյալներ ընտրված մասնակցի վերաբերյալ**

--------------------------------------------------------------------------------

(Ա. Զոհրաբյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

2.2 Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետի, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա մասնակցի հայտը գնահատվել է հետևյալ կերպ՝

| Մասնակցի զբաղեցրած տեղ | Մասնակցի անվանում | Գնահատման արդյունքում ստացած միավոր |
|---|---|---|
| Ընտրված մասնակից | «Սեյսմշին» ՍՊԸ | 100 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

---

(Ա. Զոհրաբյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «Սեյսմշին» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Զոհրաբյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ ------------------------------ Լ. Մելիքյան

------------------------------ Գ. Գևորգյան

------------------------------ Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------ Ա. Մանուչարյան